

**ՀՀ Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանի մամուլի ասուլիսը 23.10.2014թ.**

**- Արման Տեր-Արսենյան- <<Տավուշ>> հեռուստաընկերություն- Պարոն մարզպետ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի այցելության ժամանակ բարձրացվեց սահմանամերձ համայնքներից ուսանողներին ուսման վճարից ազատելու խնդիրը: Ի՞նչ ընթացքում է այն:**

-Վարչապետի այցելության ժամանկ այդ հարցը բնակչության կողմից բարձրացվեց և շատ դրական արձագանք ստացավ: Այսօր արդեն այդ ցուցակները հստակեցվել են համայնքների ղեկավարների հետ: Նրանք ներկայացրել են, մենք փոխանցել ենք կրթության նախարարությանը: Հարցը քննարկվել է կառավարությունում, ուսումնասիրվել են մասնավոր թե պետական բուհերի ուսանողներ են, ըստ այդմ կկայացվի որոշում և հարցը ընթացք կստանա: Հարցի հետ կապված մենք ամեն ինչ պատշաճ կերպով կատարել ենք:

**-Գայանե Թամամյան- Հանրային հեռուստաընկերություն –Ի՞նչ քայլեր եք ձեռնարկում գյուղատնտեսական մթերքների մթերման և վերամշակման ուղղությամբ:**

-Քանի որ մարզը գյուղատնտեսական ուղղվածություն ունի, և մենք ունենք բավականին խնդիրներ այդ ոլորտում, հաշվի առնելով այդ խնդիրը, արդեն մյուս տարվա համար նախատեսել ենք 3 տարածաշրջաններում ունենալ մթերման գրասենյակներ: Քանի որ դա ավելի շատ մասնավոր սեկտորին է վերաբերում, ունենք բարերարներ, տնտեսավարող սուբյեկտներ, որոնք շահագրգիռ են այս հարցում: Եվ կարծում եմ, որ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը ավելի արդյունավետ կդարձնի գյուղատնտեսության ոլորտը: Նաև, երևի տեղյակ էք, որ մասնավոր սեկտորը արտոնություններ ստացավ: Նույնպես վարչապետի այցելության ընթացքում մեր կողմից հարց բարձրացվեց, որ սահմանամերձ տարածքին, կամ ավելի ճիշտ 22 սահմանապահ գյուղ ունենք այդտեղ, տրվեն հարկային արտոնություններ: Շնորհակալություն կառավարությանը, որ հարցը շատ արագ դրվեց քննարկման, ուսումնասիրություն կատարվեց ֆինանսների նախարարության կողմից: Հիմա փաթեթն ամբողջությամբ Ազգային ժողովում է, քննարկման փուլում է, ու հունվարի 1-ից կմտնի ուժի մեջ սահմանամերձ բնակչությանը հարկային արտոնություններ տալու մասին օրենքը: Դա շատ կիսթանի ոչ միայն բիզնեսը, այլև ռազմավարական, սոցիալական խնդիր կլուծի: Ես արդեն գիտեմ գործարարների, ովքեր ցանկություն ունեն իրենց հոսքազօծերը նման արտոնյալ հատվածներում տեղադրել: Այնպես որ ակնկալիքներ ունենք:

**Ալբերտ Միմոնյան-<<Դիլիջան>> թերթ – Ե՞րբ կշարունակվեն Գոշավանքի և Թուֆենկյան կենտրոնի անավարտ մնացած շինարարությունները:**

- Հասկացումները կատարվել են ,Գոշավանքի շինարարությունն առաջիկայում կշարունակվի:

Թուֆենկյանի հետ կապված. քաղաքապետի հետ քննարկել ենք այդ հարցը: Հասկապես Դիլիջանի միջազգային դպրոցի բացման հետ կապված շատ ուշադիր էինք նման հարցերին: Էլի մասնավոր հարց է, իրենք պիտի անեն, խոստացել են, որ կշարունակեն: Իսկ եթե չշարունակեն, արդեն քաղաքապետարանի կողմից համապատասխան միջոցներ կձեռնարկվեն, անգամ այդ տարածքի նկատմամբ լիազորությունների դադարեցման հարց կարող է բարձրացվել: Բոլոր նման կիսակառույցների վերաբերյալ հարցերը մեր կողմից քննարկվել և ներկայացվել են ՀՀ կառավարություն:

**Նազինյան Տաթև- <<Իջևան>>, << Ֆերմեր>> թերթեր-Ի՞նչ ծրագրեր ունեք կաթի մթերման խնդիրը մարզում լուծելու նպատակով:**

-Գյուղատնտեսության նախարարությունը, որը նաև լիազորված է աջակցելու և զարգացնելու գյուղատնտեսությունը, բավականին շատ ծրագրեր ու միջոցառումներ է իրականացնում: Սկսած <<Արոտների զարգացման ծրագրից>>, որը մեր մարզում բավականին լայն թափով ընթանում է, և նույնիսկ մեր խնդրանքով, որպես սահմանամերձ տարածք, մի քանի համայնքներ նույնպես լրացուցիչ ընդգրկել է ծրագրում, որի համար շնորհակալություն գյուղ նախարարին: Այս ծրագրի մեջ մտնում է նաև տեխնիկայի ձեռքբերում, արոտների կառավարում, այսինքն ջրարբիացում, ճանապարհների կառուցում և այլն: Այս բոլորը տանում է նրան, որ մենք զարգացնենք անասնապահությունը: Իհարկե, հավելյալ ճյուղ է դառնում նաև կաթի վերամշակումը, որը նույնպես շատ կարևոր է: Այսօր, ցավոք սրտի, դա խնդիր է, քանի որ գյուղացին մի գին է առաջարկում, իսկ ընդունողն այլ՝ ավելի ցածր գին: Այսօր, իմ կարծիքով, դեռ ձևավորված չէ մարզում կաթնամթերքի շուկան: Եթե մենք արդեն գիտենք, թե որ գինու գործարանում ինչ խաղող են վերամշակում, ապա կաթի վերամշակման հետ կապված այս առումով խնդիրներ ունենք: Ունենք ծրագիր <<ՀիմնաՏավուշով>>, որը բավականին ակտիվ մասնակցեց այս տարվա միջոցառումներին, իրենք իրենց միջոցներով, տարբեր տեղերից՝ անգամ սարերից կաթ տեղափոխեցին: Իջևանի սարերում սառնարաններ են տեղադրել, որպեսզի կաթը մինչև վերամշակումը որակը պահի: Տրանսիայից եկած մեր գործընկերների հետ պայմանավորվել ենք: <<ՀիմնաՏավուշի>> ծրագրերով մինի ֆերմաներ ենք ունենալու նաև Բարեկամավան, Սևքար գյուղերում: Լսելով մեր մտահոգությունը կաթի վերամշակման հետ կապված, իրենք պատրաստ են նույն ձևով կաթը հավաքել և վերամշակել նաև այս ֆերմաներից: Բերդի տարածքում այս պահին ծրագրով կաթի վերամշակման արտադրություն պիտի բացվեր, սակայն տարբեր պատճառներով չբացվեց, հուսով եմ, որ մյուս տարվա պլաններում կընդգրկվի:

**Ոսկան Սարգսյան-<<Առավոտ>>, <<Տեսանկյուն>>-Այս խնդիրը հին պատմություն ունի, խոսքս աղբահանության և հատկապես Իջևանի աղբավայրին է վերաբերում, որն ի դեպ գտնվում է այլ համայնքի տարածքում: Ի՞նչ լուծում եք տեսնում:**

-Մեր ուշադրության կենտրոնում է խնդիրը: Մարզխորհրդի նիստերում արդեն 2 անգամ համայնքների ղեկավարների հետ քննարկել ենք աղբահանության և մաքրության պահպանման հարցը: Ճիշտ նկատեցիք, կան կազմակերպություններ, ովքեր ցանկություն են հայտնել աշխատել այդ ոլորտում և աշխատելու են Դիլիջան և Վանաձոր համայնքների հետ: Վանաձորի վարչական տարածքում է լինելու այդ աղբի վերամշակման արտադրությունը: Ցավոք սրտի ունենք շատ համայնքներ, որտեղ առկա է այդ խնդիրը: Մեկ համայնքի աղբավայրը գտնվում է մեկ այլ համայնքում: Իրենք իրենց մեջ պայմանավորվածություն ունեն: Բայց արդեն այս ուղղությամբ, ինչպես ասացի, ծրագրեր կան և հուսով եմ, որ աստիճանաբար դրանք կհասնեն նաև մեր մյուս համայնքներին, և մեր հետամուտ աշխատանքի շնորհիվ կգտնենք մի կազմակերպություն, որը կվերացնի նմանատիպ թերությունները:

**Ոսկան Մարգարյան-«Առավոտ», «Տեսանկյուն»-Հաղարծին համայնքի բնակիչները բողոքում են, որ չեն կարողանում Ազգային պարկից վառելափայտ բերել և մի կարճ ժամանակով փակել էին ճանապարհը որպես բողոքի նշան:**

- Ճիշտ է, այդ խնդիրն ունեցել ենք և անմիջապես արձագանքել ենք, մարզպետարան հրավիրեցինք բողոք ներկայացնող բոլոր քաղաքացիներին, համայնքապետերին և Ազգային պարկի նորանշանակ տնօրենին: Խնդիրն իրոք լուրջ էր, քանի որ ավելի հին պատմություն ունի, կուզենայի, որ դուք տեղեկացված լինեք: Դիլիջանի միջազգային դպրոցի նախագծումից հետո, երբ որոշվել է, որ այն կառուցվի հենց Դիլիջանում, մեծ դեր է ունեցել նաև տարածքի բնության յուրահատկությունը, այսինքն հաշվի են առնվել անտառի առկայությունը և Վրաստանին մոտ լինելու հանգամանքը: Մասսայական անտառհատումները փաստորեն վնաս էին հասցնում նաև միջազգային այդ կառույցին, որով, համոզված ենք, Հայաստանը, մեր մարզը ընդհանուր ճանաչում է գտնում համաշխարհային կրթական ասպարեզում: Որպեսզի կարողանանք կանխել անտառհատումներն, աշխատանքային խումբ ենք ստեղծել մարզպետարանում և ուսումնասիրություն ենք կատարել Դիլիջանի տարածաշրջանում և անօրինական 29 հոսքագծեր ենք հայտնաբերել: Նրանց նկատմամբ բոլոր օրինական միջոցառումները կիրառվել են: Որպեսզի էլի խուսափենք հետագա անօրինական անտառհատումներից ընդհանուր առմամբ արգելել ենք Ազգային պարկից անտառհատումները. և պլանային, և ոչ պլանային: Եվ բնականաբար բնակչության դժգոհությունը պետք է արտահայտվեր ինչ-որ ձևով և արտահայտվեց փոքր ժամանակով ճանապարհի երթևեկությանը խոչընդոտելով: Հարցը քննարկվեց: Ես ներկայացրել եմ այն հանրապետության նախագահին: Հանրապետության նախագահը Դիլիջանի միջազգային դպրոցի բացման ժամանակ, հանձնարարեց, որ այն մասերում, որտեղ կան թափոններ քամուց կամ անտառի դիրքի ,ռելիեֆի հետենանքով առաջացած, հատկացնել և բավարարել բնակչությանը: Հանձնարարվեց բնապահպանության նախարարին, նա էլ իրեն ստորադաս ՊՈԱԿ-ին, քանի որ Ազգային պարկերը պատկանում են հենց բնապահպանության

նախարարությանը: Հիմա հարցը լուծված է: Անգամ ունենք ՀՀ կառավարության որոշումը, որ 8 խորհանարդ մետր պարտավոր են մեկ ընտանիքին տրամադրել առանց գումարի:

**Նաիրա Խաչիկյան-«Իջևան» հեռուստաընկերություն- Վերին Կարմիրաղբյուր համայնքում խաղողի այգիներ են այրվել: Վնասված այգիների տերերը դիմել են նաև Ձեզ: Ի՞նչ ընթացքում է խնդիրը:**

-Բնակիչները ինձ դիմել են, մինչև ինձ դիմելը իրենք նամակ էին գրել նաև ՀՀ կառավարություն, հանրապետության նախագահին: Աշխատակազմից ինձ է ուղարկվել իրենց դիմումը: Ուսումնասիրել եմ և այդ մարդկանց ես եմ հրավիրել ինձ մոտ: Նախապես, մինչև մեր հանդիպելն արդեն քրեական գործ էր հարուցվել: «Եղվարդշին» կազմակերպության աշխատակցի անփութության պատճառով այդ այգիները հրդեհվել են: Գործն այս պահին գտնվում է քննչական փուլում: Իմ միջնորդությամբ նրանց ընդունել է նաև նորանշանակ քննչական ծառայության պետը: Քանի որ շատ ծավալուն է, կատարվում են և ապրանքագիտական և փորձագիտական ուսումնասիրություններ: Փորձագիտականը, որ իրոք այրվել է այդ աշխատակցի անփութության պատճառով, կատարվել է, իսկ ապրանքագիտականն ընթացքի մեջ է, այն շատ ծավալուն է: Բոլորը պետք է կատարեն, որպեսզի կարողանան իրենց եզրակացությունը ֆիքսեն: